Մամուլի հաղորդագրություն

(համառոտ տարբերակ)

Ցածր եկամուտ ունեցող երկրներում պահպանվող կոռուպցիայի բարձր մակարդակը «շարունակական հումանիտար աղետ» է

23 սեպտեմբերի, 2008թ. Բեռլին: Այնպիսի երկրների օրինակով, ինչպիսիք են Սոմալին եւ Իրաքը, որտեղ 2008-ին գրանցվել է կոռուպցիայի ընկալման ամենաբարձր աստիճանը, Թրանսփարենսի Ինթերնեշնլ (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության՝ այսօր հրապարակված՝ Կոռուպցիայի ընկալման 2008թ համաթիվը (ԿԸՀ) վեր է հանում աղքատության, չկայացած ինստիտուտների եւ կաշառակերության միջեւ առկա աղետալի կապը: Այդուհանդերձ, 2008թ. համաթվով զգալի անկում գրանցած այլ երկրների ցուցանիշները մատնանշում են, որ աշխարհի ամենահարուստ երկրներում, իրենց հերթին, վերահսկողական մեխանիզմները պատշաճ չափով չեն գործում:

ԹԻ ԿԸՀ-ով չափվում է պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալման մակարդակը այս կամ այն երկրում: ԿԸՀ-ն բաղադրյալ համաթիվ է՝ հիմնված գործարարների եւ փորձագետների շրջանում անցկացված տարբեր հարցումների վրա: 2008թ. ԿԸՀ-ի 0-ից 10 սանդղակով (որտեղ 0-ն ցույց է տալիս կոռուպցիայի ընկալման ամենաբարձր, իսկ 10-ը՝ ամենացածր աստիճանը) գնահատվել է աշխարհի 180 երկիր (նույնքան, որքան 2007թ.):

ԿԸՀ ամենաբարձր, 9.3-ական արժեքով, աղյուսակի առաջին երեք հորիզոնականներն են զբաղեցրել *Դանիան*, *Նոր Զելանդիան* եւ *Շվեդիան*, որոնց անմիջապես հաջորդում է *Սինգապուրը*՝ ԿԸՀ 9.2 արժեքով: Աղյուսակը եզրափակում է *Սոմալին*՝ ԿԸՀ 1.0 արժեքով, որից վերեւ, չնչին առավելությամբ, գտնվում են 1.3-ական արժեքով *Իրաքն* ու *Մյանմանն* եւ 1.4 ԿԸՀ արժեք ստացած *Հայիթին*:

Չնայած ԿԸՀ դանդաղ փոփոխությանը՝ առանձին երկրների առումով գրանցվել են վիճակագրական առումով նշանակալի փոփոխությունները: Այսպես,

ե'ւ 2007թ., ե'ւ 2008թ. զգալի ետընթաց է նկատվել *Բուլղարիայի*, *Բուրունդիի*, *Մալդիվների*, *Նորվեգիայի* եւ *Մեծ Բրիտանիայի* ցուցանիշներում:

Նմանապես, վերջին երեք տարում վիճակագրորեն զգալի բարելավմամբ աչքի են ընկել *Ալբանիան*, *Կիպրոսը*, *Վրաստանը*, *Մավրիկին*, *Նիգերիան*, *Օմանը*, *Կատարը*, *Հարավային Կորեան*, *Տոնգան* եւ *Թուրքիան*:

«Կոռուպցիայի նվազեցումը պահանջում է խիստ վերահսկողություն խորհրդարանների, իրավապահ մարմինների, անկախ լրատվամիջոցների եւ ուժեղ քաղաքացիական հասարակության կողմից», - նշել է ԹԻ նախագահ Հյուգետ Լաբելը: «Երբ այս ինստիտուտները թույլ են, կոռուպցիան դուրս է գալիս վերահսկողությունից՝ հանգեցնելով սարսափելի հետեւանքների շարքային քաղաքացիների համար, իսկ ավելի լայն իմաստով՝ հասարակությունում արդարության եւ հավասարության սկզբունքների համար»:

Անհրաժեշտ է, որպեսզի համաշխարհային նվիրատու հանրությունը ավելի առարկայական եւ համակարգված մոտեցում ցուցաբերի, որպեսզի զարգացման համար նախատեսված օգնությունը այն ստացող երկրներում նպաստի պետական կառավարման ինստիտուտների եւ վերահսկողության ուժեղացմանը, եւ որպեսզի շահառու երկրներում օգնության հոսքը զերծ մնա չարաշահումներից եւ յուրացումներից:

Գերմանիայի Պասսաուի համալսարանի պրոֆեսոր Յոհան Գրաֆ Լամբսդորֆը, որն իրականացնում է ԹԻ ԿԸՀ հաշվարկը, ընդգծել է կոռուպցիայի աղետալի հետեւանքները եւ դրա դեմ պայքարի օգուտը. «Տվյալները ցույց են տալիս, որ 10 միավորանոց սանդղակով նույնիսկ մեկ միավորով ԿԸՀ բարելավումը հանգեցնում է երկրի համախառն ներքին արդյունքի 0.5 տոկոսի չափով կապիտալ ներհոսքի ավելացմանը, ինչպես նաեւ եկամուտների աճին միջինը 4 տոկոսով»:

Մյուս կողմից, արտասահմանում կաշառակերության հետ կապված սկանդալների շարքը ցույց է տալիս, թե որքան անկարող են աշխարհի ամենահարուստ երկրները կյանքի կոչելու կոռուպցիայի դեմ պայքարում փոխադարձ հաշվետվողականության վերաբերյալ իրենց խոստումները:

###

Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ը քաղաքացիական հասարակության միջազգային հակակոռուպցիոն կազմակերպություն է:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել

Ջիպսի Գիլիան Քայզերին
ՀԵՌ.՝ +49-176 101 21 661
Ֆաքս՝ +49-30-3470 3912
ggkaiser@transparency.org

Ջես Գարսիային
ՀԵՌ.՝ +49-30-34 38 20 667
jgarcia@transparency.org